

Հայաստանում քաղաքացիական և իրավական կրթության քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղղված որոշ նկատառումներ

Հայաստանի վերափոխվող հասարակարգը և զարգացման տենդենցները պահանջում են հանրակրթական համակարգի նպատակների և արդյունքների վերաիմաստավորում: Կրթության կարևորագույն արդյունքն այսօր պետք է դիտել դպրոցը ավարտող երիտասարդների պատրաստակամությունը և կարողությունը պատասխանատվություն կրել ինչպես սեփական բարօրության համար, այնպես էլ այն հասարակության համար, որտեղ նա ապրում է:

Այսպիսով, իրավական պետության և քաղաքացիական հասարակության ստեղծումը որպես պետության հռչակած նպատակ, և պատասխանատու քաղաքացու դաստիարակումը որպես հանրակրթական դպրոցի նպատակ, փոխկապվելով միմյանց հետ, լուծում են գտնում իրավաքաղաքացիական կրթության միջոցով:

Սակայն, ներկայումս չկա պետականորեն ընդունված հանրակրթական դպրոցի իրավաքաղաքացիական կրթության ամբողջական հայեցակարգ: Մինչդեռ իրավական կրթության թե՛ քաղաքականություն մշակողների և թե՛ փորձագիտական հանրության կողմից անհերքելի է այն մոտեցումը, որ իրավական կրթությունը ենթադրում է ոչ միայն իրավական նորմերի իմացություն, այլ նաև համապատասխան վարքագծի դրսևորում: Այսպիսով, իրավական կրթությունը պետք է ներառի ոչ միայն տեղեկատվության որոշակի ծավալի յուրացում, այլ և իրավական վարքագիծ դրսևորելու որոշակի հմտություններ, համապատասխան արժեքային կողմնորոշումներ, դպրոցում իրավական միջավայրի առկայություն: Ուսուցումը պետք է անքակտելիորեն կապված լինի իրավական դաստիարակության հետ:

Դպրոցում որակյալ և պատշաճ իրավական և քաղաքացիական կրթության համակարգի ստեղծման և ներմուծման հետ կապված խնդիրներից կարևորագույնը - կադրայինն է: Այսօր, իրավունքի դասաժամերը, որպես կանոն, վարում են պատմության ուսուցիչները, որոնք, համապատասխան մասնագիտական կրթության

բացակայության պայմաններում, ոչ միշտ են ճիշտ կողմնորոշվում իրավական հարցերում: Միննույն ժամանակ, նպատակահարմար չէ պատրաստել նեղ մասնագիտացված իրավունքի ուսուցիչներ, քանզի նման մասնագետները դպրոցում բավարար ծանրաբեռնվածություն չեն կարող ունենալ, իրավունք առարկայաշարին հատկացվող դասաժամերի սահմանափակության պատճառով:

Այս խնդրի լուծման ուղիներից մեկը կարող է լինել մանկավարժական կրթության համակարգի արդիականացման շրջանակներում պատմության կամ այլ հումանիտար առարկաների ուսուցիչների լրացուցիչ մասնագիտացումը իրավունքի բնագավառում:

Սակայն, ինչպես արդեն նշվեց, իրավաքաղաքացիական կրթությունը չի հանգում միայն աշակերտների կողմից գիտելիքների պասիվ յուրացմանը, այլ մեծապես կարևորվում է նրանց իրավական վարքագիծ դրսևորելու կարողությունների ձևավորումը: Ուստի, իրավական կրթության դաստիարակչական գործառույթը պետք է իրագործվի դպրոցում իրավական միջավայրի ստեղծման ճանապարհով: Սա ենթադրում է հետևյալը.

- դպրոցը պետք է ունենա իր օրենսդրությունը, որտեղ ամրագրված են կրթական գործընթացի բոլոր մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, որոշումների կայացման ընթացակարգերը, և սահմանված նորմերի խախտման համար պատժամիջոցները:
- կրթական գործընթացի մասնակիցների իրավունքները պաշտպանող լիազորված անձ, որը կընտրվի և ընդունելի կլինի կրթական գործընթացի բոլոր մասնակիցների կողմից, որի խնդիրը կլինի հարթել ուսումնական գործընթացի մասնակիցների միջև ծագող կոնֆլիկտները:
- աշակերտական ինքնավարության գործող մարմիններ

Վերը նշած պայմանների բացակայության պարագայում բոլոր խոսակցությունները իրավական և քաղաքացիական կրթության մասին սին են:

Այսպիսով, հետազոտության արդյունքում կրթական գործընթացի մասնակիցների հետ ֆոկուս խմբային քննարկումների, դիտարկումների և փաստաթղթերի վերլուծության արդյունքում ստացված տեղեկատվության ամփոփման արդյունքում իրավաքաղաքացիական կրթության համակարգի արդյունավետության վրա ազդող

գործոնները և պայմանները, մեր տեսանկյունից, կարելի է բաժանել հետևյալ պայմանական խմբերի.

1. Ղպրոցի և կրթական համակարգի նկատմամբ արտաքին պայմաններ

Հայաստանում իրավական պետության և քաղաքացիական հասարակության ստեղծման և կայացման, ինչպես նաև իրավական կրթության աջակցությանն ուղղված պետական քաղաքականության վարում:

2. Նյութատեխնիկական զինվածության հարցեր

Դասագրքերի և մեթոդական ձեռնարկների, դիդակտիկ նյութերի և ուսուցման այլ տեխնիկական միջոցների առկայություն: Այս ոլորտում ակտիվ աշխատող ուսուցիչների և դպրոցների խթանում (դրամաշնորհային տեսքով):

3. Ուսումնակազմակերպչական պայմաններ

Իրավունքի ուսուցիչների համար մասնագիտական որակավորման, վերավորակավորման և որակի բարձրացման մշտապես գործող պետական համակարգերի բացակայություն: Անհրաժեշտ է.

- իրավունքի ուսուցիչների միություններ/ասոցիացիաներ/ցանցերի ստեղծում
- մասնագիտական փշման և փորձի փոխանակման համակարգ ստեղծում
- իրավունքի ուսուցիչների համար գիտամեթոդական առարկայան հանդես հիմնում
- դատաիրավական ինստիտուտների և պրոֆեսիոնալ պրակտիկ իրավաբանների հետ համագործակցություն և նրանց ներգրավվում ուսումնական գործընթացում

4. Իրավունք առարկայաչարի ծրագրային և մեթոդական մոտեցումների վերանայում և արդիականացում

Դասագրքերի և ձեռնակների ճկուն արձագանք և շարունակական արդիականացում՝ հիմնվելով կրթական նոր մոտեցումների վրա
Ինտերակտիվ և այլ աշակերտակենտրոն մեթոդների արդյունավետ օգտագործում:

5. Կրթօջախի ներսում դպրոցական իրավական միջավայրի մոդելի կառուցում,

որը մեծապես կնպաստի իրավական վարքագիծ դրսևորելու կարողությունների ձևավորմանը, խնդրահարույց իրավիճակները իրավական միջոցներով լուծմանը:

- նոր դպրոցական միջավայրի ստեղծում՝ հիմնված մարդկային արժանապատվությունը մարդու իրավունքների և ազատությունների հիմքն է սկզբունքի վրա:

Դպրոցում ներկայումս առկա ավտորիտար կառավարման և փոխհարաբերման համակարգը և ավանդույթը, որի պարագայում շեշտը դրվում է հնազանդության/խոնարհության, և ոչ թե ճանաչողության վրա, որտեղ ուսուցիչների նորամուծությունների հնարավորությունները սահմանափակված են ծրագրերին հետևելու պարտավորությամբ, խիստ սահմանափակված է աշակերտների ինքնադրսևորման հնարավորությունները: Նման իրավիճակը և պայմանները չեն կարող նպաստել ժողովրդավարական հասարակարգին վայել պատասխանատու քաղաքացիների դաստիարակությանը: